St Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Registered charity No. 1173403
Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵՉՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILLINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading, 1st November 2026 Bulletin 48/2026

Eighth Sunday of the Exaltation of the Holy Cross

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԵՓԵՍԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 1:1-14

Ողջոյն

Ես, Պօղոս, Աստուծոյ կամքով Քրիստոս Յիսուսի առաքեալը, կը գրեմ Եփեսոս բնակող եղբայրներուդ, Քրիստոս Յիսուսի հաւատացողներուդ: Թող Աստուած մեր Հայրը եւ Տէր Յիսուս Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի:

Քրիստոսով մեր ունեցած հոգեւոր օրհնութիւնը

Օրհնեալ է Աստուած, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Հայրը, որ Քրիստոսով մեզ օրհնեց երկինքի մէջ ամէն տեսակ հոգեւոր օրհնութեամբ: Անիկա աշխարհի գոյութենէն իսկ առաջ մեզ ընտրած էր՝ Քրիստոսի միջոցաւ իրեն պատկանելու համար, որպէս սուրբ եւ անարատ ժողովուրդ, եւ իր սիրով մեզ նախասահմանեց՝ Յիսուս Քրիստոսի ձեռքով իր որդիները ըլլալու, որովհետեւ ա՛յդ էր իր կամքը եւ ծրագիրը:

Ուստի գովենք զինք այն փառքին համար՝ որ մեզի շնորհեց իր սիրելի Որդիին միջոցաւ: Արդարեւ, անով փրկուեցանք եւ անոր արիւնով մեր մեղքերուն թողութիւն գտանք: Որքա՛ն մեծ է իր շնորհքը, որ առատօրէն տուաւ մեզի՝ ամենայն իմաստութեամբ եւ գիտութեամբ: Որովհետեւ իր կամքին համաձայն մեզի յայտնեց շատ կանուխէն պատրաստած իր ծրագիրը, որ Քրիստոսով պիտի իրագործուի: Եւ այդ ծրագիրը սա է, որ երբ ժամանակները իրենց լրումին հասնին՝ Քրիստոս իրմով պիտի բովանդակէ ամէն ինչ որ կայ երկինքի մէջ եւ երկրի վրայ:

Քրիստոսի միջոցաւ է որ ժառանգորդ դարձանք փրկութեան: Աստուած, որ ամէն ինչ կը յաջողցնէ ըստ իր առաջադրած ծրագրին ու կամքին, անով առաջուց հրաւիրեց մեզ՝ իր փառքը գովերգելու. մենք՝ որ Քրիստոսի յուսացողներուն առաջիններէն եղանք: Դուք ալ, երբ լսեցիք ճշմարիտ քարոզութիւնը, այսինքն Աւետարանը որ ձեզի փրկութիւն բերաւ, հաւատացիք Քրիստոսի եւ խոստացուած Սուրբ Հոգիով կնքուեցաք: Եւ Սուրբ Հոգին գրաւական է՝ թէ պիտի ժառանգենք Աստուծոյ խոստումը, երբ Աստուած պիտի փրկէ իր սեփական ժողովուրդը, որպէսզի իր փառքը գովերգենք:

The Epistle of St Paul's Letter to the Ephesians 1:1-14;

Greetings from Paul

This letter is from Paul, chosen by the will of God to be an apostle of Christ Jesus.

Church Attendance:

On Sunday 25th October 2026, 83 faithful attended our church for worship, excluding Altar Servers, Members of the Choir, Wardens and children under the age of 16. Join us at St Yeghiche Armenian Church every Sunday and bring a friend and family member.

let us pray together and strengthen our faith.

Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

I am writing to God's holy people in Ephesus, who are faithful followers of Christ Jesus.
May God our Father and the Lord Jesus Christ give you grace and peace.

Spiritual Blessings

All praise to God, the Father of our Lord Jesus Christ, who has blessed us with every spiritual blessing in the heavenly realms because we are united with Christ. Even before he made the world, God loved us and chose us in Christ to be holy and without fault in his eyes. God decided in advance to adopt us into his own family by bringing us to himself through Jesus Christ. This is what he wanted to do, and it gave him great pleasure. So we praise God for the glorious grace he has poured out on us who belong to his dear Son. He is so rich in kindness and grace that he purchased our freedom with the blood of his Son and forgave our sins. He has showered his kindness on us, along with all wisdom and understanding.

God has now revealed to us his mysterious will regarding Christ—which is to fulfil his own good plan. And this is the plan: At the right time he will bring everything together under the authority of Christ—everything in heaven and on earth. Furthermore, because we are united with Christ, we have received an inheritance from God, for he chose us in advance, and he makes everything work out according to his plan.

God's purpose was that we Jews who were the first to trust in Christ would bring praise and glory to God. And now you Gentiles have also heard the truth, the Good News that God saves you. And when you believed in Christ, he identified you as his own by giving you the Holy Spirit, whom he promised long ago. The Spirit is God's guarantee that he will give us the inheritance he promised and that he has purchased us to be his own people. He did this so we would praise and glorify him.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 8:17-21

Ճրագին օրինակը

Չկայ ծածուկ բան որ չյայտնուի եւ կամ գաղտնի բան՝ որ չգիտցուի եւ երեւան չգայ: Ուրեմն ուշադիր եղէք թէ ի՛նչպէս կ'ընդունիք այս խօսքերը, որովհետեւ ունեցողին պիտի տրուի, իսկ չունեցողէն պիտի առնուի նոյնիսկ այն՝ ինչ որ կը կարծէ թէ ունի:

Յիսուսի մայրն ու եղբայրները ***(Մտ 12.46-50,Մր 3.31-35)***

Յիսուսի մայրն ու եղբայրները իրեն եկան, բայց խուռն բազմութեան պատճառով չկրցան իրեն մօտենալ:

Լուր տուին իրեն, ըսելով.

– Մայրդ եւ եղբայրներդ դուրսն են եւ կ'ուզեն քեզ տեսնել:

Յիսուս ըսաւ.

– Մայրս ու եղբայրներս ասոնք են, որոնք Աստուծոյ խօսքը կը լսեն եւ կը գործադրեն:

The Holy Gospel of Jesus Christ according to Luke 8:17-21

Parable of the Lamp

For all that is secret will eventually be brought into the open, and everything that is concealed will be brought to light and made known to all.

"So pay attention to how you hear. To those who listen to my teaching, more understanding will be given. But for those who are not listening, even what they think they understand will be taken away from them."

The True Family of Jesus

Then Jesus' mother and brothers came to see him, but they couldn't get to him because of the crowd. Someone told Jesus, "Your mother and your brothers are standing outside, and they want to see you." Jesus replied, "My mother and my brothers are all those who hear God's word and obey it."

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

Տոն բոլոր սրբերի՝ հների և նորերի, հայտնիների և անհայտների

Հայ Եկեղեցին այս տոնով նշում է բոլոր այն սրբերի հիշատակը, որոնց անունները չեն անցել Տոնացույցի կամ եկեղեցական օրացույցի մեջ, սակայն նրանց սուրբ անունները գրված են Երկնքի արքայության սրբազան մատյանում:

Քրիստոնեական հալածանքների և հավատի համար մղված բազում պատերազմների ժամանակ շատերն են նահատակվել, որոնց անունները, ցավոք, չեն պահպանվել և հասել մեզ: Ուստի, եկեղեցին հաստատել է այս նվիրական տոնը հենց նրանց հիշատակը ոգեկոչելու համար: Անձեր, որոնք իրենց թանկ արյունը հեղեցին հանուն Քրիստոսի և նրա խորհրդավոր մարմնի՝ եկեղեցու շինության:

Feast of All Saints - the old and the new, the known and the unknown

By this feast the Armenian Apostolic Church commemorates the memory of all those saints, whose names are not included in the Church Calendar, but whose names are registered in the sacred book of the Heavenly Kingdom.

Many people have been subjected to severe torments and have been martyred during the wars for the sake of faith. Unfortunately, we do not know their names. So the Church has established this feast in the Church Calendar in order to commemorate their memory. They are persons who shed their blood for the sake of Christ and His Church.

AILY BIBLE READINGS FOR 2026 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

2 November	Sts. Stephen Patriarch of Rome, and the Priests, and the Deacons, and the faithful Wisdom 5:1-8; Amos 3:12-15; Ephesians 3:1-10; John 10:11-16
3 November	Sts. Aquiphsimeus the Bishop, Joseph the Priest, Ayethalus the Deacon, and Plato the Martyr Proverbs 8:12-21; Nahum 2:1-7; 1 Timothy 5:17-21; Luke 9:23-27
4 November	Ephesians 1:15-2:3; Luke 8:22-25
5 November	Sts. Metrophanes and Alexander, patriarchs, and Paul the Confessor, and the scribes Marcian and Marturius Wisdom 6:22-26; Zechariah 12:6-10; Hebrews 13:7-9; Matthew 4:23-25
6 November	Ephesians 2:4-22; Luke 8:40-48
7 November	The Holy Archangels Gabriel and Michael and all the Heavenly Hosts Genesis 18:33-19:2; Job 38:4-7; Isaiah 6:1-7; Ezekiel 1:1-20; Hebrews 1:6-14; Matthew 18:10-14

Dear Parishioners and Armenian Community Members:

The Sunday collection plate circulating during Divine Liturgy is for all to contribute each Sunday in order to have a thriving church. Our Lord Jesus Christ told us in Matthew 17:24-27. Your donation, participation and support is vital, not only by attending the church but also with your time and financial contribution to our church. Please be generous and help to keep the doors of the St Yeghiche Armenian Church open and provide all the services.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն.

«Ծածուկ ոչինչ կայ, որ յայտնուի, ոչ էլ գաղտնի բան, որ չիմացուի եւ ի յայտ չգայ: Այսուհետեւ զգո՛յշ եղէք, թէ ինչպէս էք դուք լսում. որովհետեւ ով որ ունի, նրան կը տրուի, իսկ ով որ չունի, եւ այն, ինչ որ նա կարծում է, թէ ունի, կը վերցուի նրանից»(Ղուկ. 8:17-18):

Հաւատակից եւ հայրենակից սիրելինե՛ր,

Որքա՛ն ծածուկ զոհողութիւններ, ողորմութիւններ, սիրոյ գործեր կան, որ չգիտենք, բայց որոնք սերմի պէս շարունակաբար դեռ պտուղ են տալիս: Առաջին դարերում ասում էին. «Արիւն նահատակաց՝ սերմ Եկեղեցւոյ»: Հազարաւորներ անանուն ու անյայտ են մեզ համար, բայց իրենց արեան վկայութիւնն է, որ խօսում է մինչեւ հիմայ:

Տարուայ մէջ մենք մի օր ունենք, որ յատուկ, մասնաւոր խոնարհում եւ օրհնութեան աղօթք ենք բարձրացնում եւ յիշում մանաւանդ մեզ անյայտ, անունները մեզ չհասած, կեանքի մանրամասներով մեզ համար անիմանալի, բայց Աստծոյ համար միշտ կենդանի հոգիներին: Միշտ շաբաթ օրը նշուող այս տօնը կոչւում է **«ՏՕՆ ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ՝ ՀՆՈՑ ԵՒ ՆՈՐՈՑ, ՅԱՅՏԻՑ ԵՒ ԱՆՅԱՅՏԻՑ»**: Այդ օրը օրհնութեան հեղեղ է բոլոր սուրբերի՝ աշխարհին յաղթած անթիւ-անհամար հրեշտակացած հոգիների սիրոյ շնորհիւ: Ովքե՞ր են սրբերը, եթէ ոչ մեզ պէս միս ու արիւնից կազմուած ու կրքերին ենթակա հողեղէններ, որոնք Հոգու շնորհով սրբագործման ընթացք են ապրում եւ Քրիստոսով յաղթում աշխարհին:

Շատերը գիտեն, որ միաշաբաթ-կիրակին՝ իբրեւ Տիրոջ յարութեան օրը, բացառապէս նուիրուած է Քրիստոսին: Իսկ սուրբերին, որպէս կանոն, յիշատակում ենք եւ տօնում երկուշաբթի, երէքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերին՝ իբրեւ պահքի օրեր ունենալով չորէքշաբթին եւ ուրբաթը: Սրբոց տօնական առաւօտեան ժամերգութիւններին եկեղեցում Տիրոջ առաջ նախ յիշում ենք Եկեղեցու գլխաւոր, ամենայայտնի սուրբերին, ապա եւ՝ այդ օրուայ յիշատակելի սուրբերին: Հաւատացեալներից շատերն են սիրում ձայնաւոր եղանակով հետեւել առաջնորդող եկեղեցականին, երբ ատեանում խաղաղութիւն ենք խնդրում՝ Տիրոջից միասնաբար ***«Տուր մեզ, Տէր»***աղերսելով: ***«Վասն Սրբուհւոյ Աստուածածնի եւ Յովհաննու Կարապետի, սրբոյն Ստեփաննոսի Նախավկային»***յիշելով եւ ապա շարունակելով՝ ***«Վասն սրբոց Քոց առաքելոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, հայրապետաց, կուսանաց եւ միանձանց»,***իսկ վերջում Հայաստանեայց եկեղեցու համար իւրահատուկ առաքելութիւն ունեցած սուրբերից ոմանց՝ ամէն անգամ կրկնելով ***«զիաղաղութիւն Քո տուր մեզ, Տէր»***: Մեր հաշտարարը երկնքի եւ երկրի միջեւ Տէր Յիսուս Քրիստոս է:

Փրկչի ետեւից Իր օրինակով Իր եկեղեցին է շարունակում հաշտարար առաքելութիւնը՝ Քրիստոսի խօսքը կեանք դարձրած Իր սուրբերով:

Ընդհանրապէս պատարագը մատուցւում է Քրիստոսի ամբողջ եկեղեցու՝ ե՛ւ ողջերի եւ ննջեցեալների համար: Բայց քանի որ ննջեցեալ սուրբերը մեր Փրկչի պէս յաղթել են աշխարհին, իրենց յիշատակելիս խորանի աջակողմ ենք գալիս՝ ի շեշտադրում այն բանի, որ սուրբերը Քրիստոսի աջակողմում են: Շատերն են ձայնակցում ***«Առաքելոց սրբոց, մարգարէից, հայրապետաց…»***-ից, մինչեւ ***«Միանձնացելոց սրբոց…»***եւ **«Թագաւորաց հաւատացելոց…»**եւ ապա կարծես հէնց այս տօնի ձեւակերպումով յիշելով բոլորին.***«Ընդհանուր բոլոր հաւատացեալների՝ արանց եւ կանանց, ծերերի եւ մանուկների եւ ամենայն չափ ու հասակի հաւատով ի Քրիստոս ննջեցեալների համար թող յիշատակ լինի այս սուրբ պատարագը, աղաչում ենք»:***

Յիշո՞ւմ էք, թէ ինչպէս Աստուած խոստացաւ չկործանել պղծութեամբ լեցուն քաղաքները, եթէ անգամ տասն արդար գտնուի այնտեղ, ինչպէս է Քրիստոս

յայտարարում, որ վերջին օրերի տառապանքները, նեղութիւնները կկրճատուեն ընտրեալների պատճառով: Ահա այս ընտրեալներն են, որ մեզ համար բարեխօս են լինում «վայ»-երի դարաշրջանում: Այո, շատ են կանչուածները, թերեւս բոլորին է ուղղուած Փրկչի կանչը, բայց ոչ բոլորն են ընտրեալ դառնում, ոչ բոլորն են բարի մարտի մէջ մինչեւ վերջ մնում՝ հաւատարիմ լինելով Տիրոջը եւ արիւն թափելու աստիճան դէմ կանգնելով մեղքին: Քրիստոսի երկրորդ գալուստին եւ մեծ դատաստանի օրը իրենք ոչ միայն չեն դատուելու, այլեւ Քրիստոսի հետ գալու են դատելու աշխարհը: Այս կենդանի հոգիները

երկնքում անդադար եւ մշտարթուն բարեխօսներ են մեզ համար՝ իբրեւ Եկեղեցու կեանքին մասնակիցներ, որոնց չի մոռանում Եկեղեցին եւ ուրախութեամբ տօնում է նրանց յիշատակը:

Մենք մեր հաւատքի կեանքում՝ բարի պատերազմի մէջ իրենցով պիտի քաջալերուենք, իրենց օրինակով զօրանանք եւ յիշենք Պօղոս առաքեալի խօսքերը. ***«Ուրեմն մենք էլ, որ մեր շուրջը վկաների այսչափ բազմութիւն ունենք, դէ՛ն գցենք ամէն հպարտութիւն եւ ծանր մեղք, համբերատարութեամբ ընթանանք դէպի մրցասպարէզ, որ բացուած է մեր առաջ. նայենք Յիսուսին՝ հաւատի Զօրագլխին, այն Կատարեալգործողին, Որն Իր առաջ դրուած ուրախութեան համար յանձն առաւ խաչը, արհամարհեց ամօթը եւ նստեց Աստծոյ աթոռի աջ կողմում»*** (Եբր. 12:1-2):

Չկայ ոչինչ եւ ոչ մի անուն, որ Աստծուն յայտնի չլինի: Չկայ արարք, թաքուն ողորմութիւններ ու բարի գործեր, հսկումներ, աղօթքներ, պահքեր ու ծոմեր, որոնցից Աստուած տեղեակ չլինի: Հոգեւոր կեանքում ցանկացած քանքի, ճիգի, գործի ու տքնանքի վարձը Աստծուց է պէտք ակնկալել: Իսկ երբ ի ցոյց մարդկանց լինի եւ յաճախ սկսենք թուարկել, որ այս ենք արել, այս կամ այն վաստակն ունենք, պէտք է զգոյշ լինենք, որ վարձից չզրկուենք. ***«ինչ որ նա կարծում է, թէ ունի, կը վերցուի նրանից»:***

Սիրելինե՛ր, յաճախ կարդանք սուրբերի կեանքը, որ վարք կամ վկայաբանութիւն է կոչւում: Վստահ եմ, հոգեւոր նոր եռանդի առիթ կդառնայ այս փորձառութիւնը, որով մենք էլ ամենօրեայ մեր կենցաղի մէջ յաղթող պիտի լինենք Քրիստոսով, ում Հօր եւ Սուրբ Հոգու հետ փառք, յաւիտեանս. ամէն:

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան


A quarter-century of faith, community, and devotion has been beautifully preserved in print titled "A LIVING TEMPLE"

To commemorate the 25th anniversary of St Yeghiche Armenian Church consecration, the newly published silver jubilee book offers parishioners and community a moving look at the parish's history.

The 136 page book "A LIVING TEMPLE" features a look back at the consecration ceremony, historical photographs of the serving clergy, parish founders, events, treasures and various activities over the 25 year period.

Copies of the book can be obtained at church following Sunday service, in exchange for a minimum donation of £10.00. Alternatively, contact the parish council by emailing info@styeghiche.org.uk

All proceeds will go directly toward the running cost of the church.



4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

- By Mrs Nelly and Varak Garboushian for the souls of her Husband who was also a loving Father the late **YEGHIA GARBOUSHIAN** on the 40th day memorial service of his passing, also for all the old and newly departed members of the **GARBOUSHIAN** family.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.
Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

General

St Yeghiche Armenian Church is here to cater for all of your spiritual needs
Baptisms, Weddings, Baby Blessings, Home/Workplace Blessings, Seniors' Visitation, Hospitals/Home Visitation/Prayer, Funeral Service, Requiem, Grave Site Prayers, and more..

Please contact members of the Parish Council at Church every Sunday to request any of the above services. Alternatively, call Tel: 020 73738133 office, or write to Email: serices@styeghiche.org.uk

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan on 07548 777 147.

Hokehankist Requests: To request a requiem service and include details in our Sunday Bulletin, please contact us ***before Thursday Evening.*** Please contact Mr Viken Haladjian, or approach a mem-ber of Parish Council at church every Sunday after Badarak.
Tel: 020 7373 8133 office, 07970 146 280 mobile Email: services@styeghiche.org.uk

In Liu of Flowers: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved ones, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund.

Donations for prayers and annual membership contributions, in support of church's annual expenses, are welcome. Donations can be made;
-By a cheque made payable to "St Yeghiche Armenian Church Parish",
-By electronic bank transfer to "St Yeghiche Armenian Church Parish Ltd"
HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26
-By electronic card reader at the Church entrance.
-By QR Code directly to the Church PayPal or SumUp accounts.

PayPal Scan. Pay. Go.

Scan to Pay

St Yeghiche Armenian Church is a UK Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

Membership: St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk